միայն չէ ընդհանրանում ժողովրդի մէջ, որովհետև լրագրութեանը չէ օգնում թիֆլիսկից աշխատողը:

Մեր գաւառական թղթակցութեանց զըլխաւոր նիւթը ուսումնարանների հարցն է, բայց մի միտղամնութիւն, որ տիրում է միշտ, այն է, որ այդ հարցերը վերաբերվում են Հայ—լուսաւորչականներին, բոլորովին լռութեամբ անցնելով Կովկասի և Անդրկովկասի Հայ—կաթոլիկների և Հայ-բողոքականների կեանքը: Կարծես այդ առանձնական կրօնական կուսակցութիւնները Հայութիւնից անջատված տարրեր լինէին:

Ազգային գաղափարի ընդհանացնելը այն ժամանակ հաւանական կարող է լինել, երբ այդ կուսակցութիւնների մաքերը կը միանան մի գաղափարի մէջ, որին պէտք է առաջնորդէ լրագրական խօսքը:

Լրագրական թղթակցութիւնները լուռ են հրապարակայնս յայտնելու թէ Կովկասի և թէ Անդրկովկասի Հայ-կաթոլիկ և Հայ-աւետարանական համայնքները որպէս են տարբում, որքան ընդհանրացած է նոցա մէջ ազգայնութեան գաղափարը, ունե՞ն արդեօք ուսումնարաններ և ազգային հիմնարկութիւններ, որպէս են առաջնորդվում լուսաւորութեան մէջ, որպիսի ապագայ կարող են ունենալ: Եթէ Հայ-կաթոլիկ և Հայ-աւետարանական երիտասարդութիւնը չէ հետաքրքրվում այդ հարցով, պէտք է առհասարակ բոլոր թղթակցութիւնները հետաքրքրվին այդ մէջքով: Այժմ, ազգային շահն պահանջում է ոչ թէ գարդակ մաքերով ծանրաբեռնել ազգային պարբերական հրատարակութիւնները, այլ աւելի լուրջ, խորհրդական և կառուցողական մաքերին լայն ասպարէզ տալ:

Ուրեմն ինչպէս լրագրութիւնը, այնպէս և գաւառական թղթակցութիւնները պէտք է աշխատեն որ Հայ ազգի բոլոր մասերի մէջ կապվի եղբայրութեան ձգմարիտ համակրութիւնը, և ազգութեան մտածմունքը աւելի զարգացվի հասարակ ամբոխի մէջ: Այժմ գործելու ժամանակ է և ոչ վիճաբանելու, որովհետև այդ հարցի հետ այժմ բաւական ծանոթացած է այժմ հասարակաց կարծիքը: Պէտք է աշխատել որ Հայ ազգի մասերի միութիւն լինի, որովհետև ազգի փրկութիւնը և նրա զլխաւոր բարոյական ոյժը պայմանաւորվում է միայն միացեալ ազգային ոյժով: Եւ մեր յոյսը պակված կը լինի այն ժամանակ, երբ մեր խօսքին արձագանք կը տան գաւառական թղթակցութիւնները, երբ Հայ-կաթոլիկ և Հայ-աւետարանական երիտասարդութիւնը չեն խորշի լրագրական ասպարէզից և կառարեալ համերաշխութիւն կը կապվի Հայ-լուսաւորչականի, Հայ-կաթոլիկի և Հայ-աւետարանականի մէջ:

Հայ-կաթոլիկ

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒԻ

—

1 յուլիսի

Կամենալով ծանօթացնել մեր հասարակութիւնը մեր քաղաքային ուսումնարանի դրութեան հետ, ես յանձն առի գրել դրա ճանրաման նկարագրութիւնը:

Սեպտեմբերի 1-ին, երբ որ մենք՝ աշակերտները ժողովվեցանք ուսումնարան, նորան մեծ փոփոխութեան մէջ գտանք. վերատեսուչը փոխվել էր, չատ վարժապետներ նոյնպէս: Մեծ ուրախութիւն պատճառեց մեզ ուրիշ ուսուցչի և վերատեսչի երես տեսնելը, որովհետև ամբողջ հինգ տարի մի և նոյն երեսը, մի և նոյն ֆիզիոնոմիան ձանձրացրել էին մեզ: Բայց այդ ուրախութիւնը ժամանակաւոր էր:

Պարոն Սերգէյ Պետապովի, Նիկոլայեվի ու Դամալեվսկու տեղերը, որոնք այս տարի թողնցին դպրոցը և որոնց աշխատութեամբ անցեալ տարի ուսումնարանը մեծ զարկ ստացել էր ուսման կողմից, բռնեցին Կուզնէնկո ու Զիչինաձէ վարժապետները, իսկ Զիչինաձէի տեղ կէս տարուց յետոյ, որը թողեց ուսումնարանը, երեսնաց Զէտզէնիձէ, ու պարոն վերատեսուչ Նիկիֆորի տեղը, այժմեան տեսուչ-ուսուցիչ չորրորդ դասատան Բոզդանովը: Թէ ինչպէս էր անցնում ուսումն առաջին, երկրորդ ու երրորդ դասատանների մէջ, այդ աւելորդ համարեցի գրել, իմանալով որ ինքն ընթերցողը կարող է իրեն երևակայել, թերևալ պատեղ չորրորդ դասատան ուսումի ընթացքը, ուր պարպակում էր ինքն Բոզդանովը:

Դասն սկսված որից առաջին չարաթը առանց դասի անցաւ. Բայց երկրորդ չարթնում վերատեսուչը, աշակերտների ընդունած տուեց չարաթվայ դասերի ցուցակը (распредѣленіе), այնպէս որ մինչև դասը սկսվիր ամբողջ ամիսն արդէն անցել էր: Վերջապէս մեռնելից որ երկուշաբթի օրը դաս սկսվի:

Աշակերտներս հաւաքվեցանք ըստ սովորութեան դասատանն ու սպասում էինք աղօթք կարդալու. անհանգիստ սպասելուց յետոյ վերջապէս աշակերտներից մէկը սկսեց «Преблагій Господи» աղօթքը կարդալը, առանց տեսչի հրամայելուն: Աղօթքը կարդալուց, նոյնեցանք նստարանների վրա:

«Էհ, իմանում է՛ք, ասաց տեսուչը, աշակերտներին զառնալով, այսօր երկուշաբթի է, հայերը սիրում են երկուշաբթի օրը ապրանք չառնել ու չը ծախել, չատ խելօք ազիսատաբ ազգ է, Чортъ возьми, չարուհնկեց նա, ինչ կը նշանակէ կիրակի ամբողջ օրը խաղալ, ազատ անցնել ու զիշերով առաւօտը վազել դէպի զուքան զուները բանալ՝ թէյը չը խմած»: Ինչպէս յայտնի է վարժապետի ամեն մի անհամ խօսքը քաղաքութեամբ կանցնի, նոյնպէս և մենք, խօսքը չաւարտած, ծիծաղը սկսեցինք. ամբողջ տասն րոպէ ծիծաղը չարունակվում էր, իսկ ինքն զարմանալով իր ասած խօսքից, զարգում չէր ծիծաղից. Զանգակի ձայնը լսվեցաւ, որովհետև իւրաքանչիւր դասը մօտ 3/4 ժամ կը տեւէր: Երկրորդ դասին յայտնվեցաւ տեսուչը ու սկսեց իր պատմութիւնը: Ինչպէս երեւաց առաջին խօսքից, այսօր դաս չէր լինելու, որովհետև երկուշաբթի էր, ինչ զլխացաւ տամ ընթերցողաց, անցաւ երկուշաբթին—երեքշաբթի օրը կրկին հաւաքվեցանք Մտաւ Բոզդանովը: «Աղօթքի կանգնեցէ՛ք», ասաց աշակերտաց, որովհետև անցեալ երկուշաբթի օրից սովորել էր մոռանից, որ դասը սկսվելուց աղօթք է հարկաւոր կարդալու: Այս աղօթքը կարդալը զարմանալի կերպով միայը կը պահէր. պահեց մինչև երեքշաբթի. Այս երեքշաբթվայ միջոցում պէտք է խոստովանվել, որ մի դաս կարգին անցնում էր, որին ուշադրութիւն էր դարձնում տեսուչը, թէպէտ և դասի մեծ մասը խոսակցութեան էր ենթարկված. Անցաւ երեքշաբթի թէ չէ, մոռացաւ իր պարտաւորութիւնը, մոռացաւ իր ուսուցիչ լինելը. այդ օրից սկսած նա կորցրեց բոլորովին իր ուշադրութիւնը ուսման վրա.

Դեկտեմբեր ամիսն եկաւ: Զմեռ էր: Դասատան սենեակը այնպէս ցուրտ էր, որ աշակերտների ատամների ձայները խանգարում էին պատասխանողին դաս ասելու, իսկ Բոզդանովը հագած իր ծանր վերարկուն, երկայն բէգինի կրկնակոշիկները ոտներին, չը դչալով ցուրտը, անց ու դարձ կանէր գրասեղանների կողմովը, դասատան մէջ: Հարուստ ծնողների որդիքը—աչակերտները չուտով հետեցին իրենց մեծի օրինակին, իսկ աղքատ աչակերտները, որոնք զրկված էին պատօրից, տանվում էին ցրտից: Վերջապէս մի օր աչակերտներից մէկը դառնալով տեսչին, ասաց. «Մենեակը բաւականին ցուրտ է, անցեալ տարի երրորդ դասատան երկու վառարան ունէինք, բայց այս տարի մէկն էլ չը կայ,»—«էհ, ասաց տեսուչը, այնտեղ վառարանը իզուր ընկած է, հարկաւոր է բերել տալ այստեղը: Այնուհետև երբ տաքը սկսվից դասատան մէջ, աշակերտները սկսեցին չը հանել պալտո ու կարողացան ոտքի վրա համբաձակ կանգնել դաս պատասխանելու: Սրանց օրինակին հետեց իրենց տեսուչը և հանեց իր վերարկուն.

Թէպէտ և հարկաւոր է, սիրելի ընթերցող, աչակերտին ամենայն բանում օրինակ առնելու իրեն մեծաւորից, բայց այստեղ, չորրորդ դասատան ընդհակառակն էր. վարժապետը պէտք էր սովորէր իր աչակերտից ամեն մի բան.

Զմեռն առհասարակ պէտք էր, որ դասը 9-ին սկսվիր, բայց այդ կանոնին նոյնդ չը կար, 8, 8¼, 8½ ու 8¾-ին բոլորը մէկ էր: Աչակերտները սոնվաված էին հաւաքվել ժամի 7¾, դեռ մթնում, որովհետև չէին ուզենայ վարժապետի աչքին վատ երևալ:

Հինգշաբթի էր: Այդ օրվայ առաջին դասը թուաբանութիւն էր, բայց տեսուչը անցեալ երկուշաբթի օրից մնալել էր ծանոթացնել սպեցիրալի հետ: Ներս է մտնում վառ տեսուչը, «Նու, ինչ դաս է», հարցրեց աչակերտներից.—«թուաբանութիւն է, բայց դուք ասացիք որ այսօր մեզ աչքերդից կը լինիս, ասացին աչակերտները մեկեամուռ: «Այս թուաբանութեան խնդիրները դուք արէք, ես այս բոպէիս կը գամ, ասաց աչակերտներին ու դուրս գնաց: Անցաւ երկրորդ, երրորդ դաս և անա յանկարծ չորրորդ դասին երևեցաւ և առանց հարցնելու թէ վճռել են արդեօք տուած խնդիրները, նստաց գրասեղանների մէկի վրա. «Ինչ դաս է», կրկին առաջարկեց իր հարցը պ. Բոզդանովը.—«Կնկաչութիւն է», «Նու, դա էլ դաս չէ որ մարդս պարապվի, կանգնեցէ՛ք աղօթքի»

Աչակերտները լուռ նայում էին այս տեսարանին, զարմանում էին, բայց մի բառ ևս ասել նոքա չէին համարձակվում. Նոքա յիշում էին անցեալ տարին, ուր դաս ասելիս դողում էին, բայց այստեղ դաս չը կար: Այս օրից սկսած Բոզդանովը տրամայեց ուսումնարանի ծառային, որ նա փոստը եկած ժամանակը լրագրերը իրեն հասցնէ դասատան մէջ, եթէ փոստի եկած օրը չէր լինում, դասատուն մտնալը կը տեսնէր նորան մէջտ մի խոր մտածմունքի մէջ. Այդ շատ հասկանալի է, Ուրիշ տեսարան էր ներկայացնում այն օրը, երբ փոստը եկած էր լինում.

Պատմութեան դասէր. Բոզդանովը վառարանի մօտ կը դնէր ու «Кавказъ» լրագիրը ձեռքն առած, կը կարդար, մի աչակերտի ասելով «դաս պատասխանեցէ՛ք»: Աչակերտը կը սկսէր իր պատմութեան դասը, կասէր երբեմն «Сказка о рыбакѣ и рыбкѣ»-ից, կասէր չարունակ-անկատար ու վերջապէս ինքն նեղանալով իր «արարական պատմութիւնից» կը վերջացնէր և կանգնած լուռ կը կենար, սպասելով տեսչի հրամայելուն, որ նստէ. Ցանկարծ զարթնելով իր կարդալուց, տեսուչը կը տեսնէ աչակերտին կանգնած լուռ ու մտաբերով որ վերջացրած կը լինի, կը հրամայէ որ նստէ ու յետոյ մի ուրիշին դառնալով «դաս պատասխանեցէ՛ք», կընկնի էլի իր խոր կարդամտքի մէջ.—Լուսի հասկանալի է, ինչպիսի ուսումն պէտք է անցնի այն ուսումնարանումը, որի տեսուչը կը լինի այնպիսի մէկը, ինչպիսի է Բոզդանովը:

Խորհուրդ ենք տալիս մեր կողմից այն ծնողներին, որոնց որդիքը կարդում են վիչեալ քաղաքային դպրոցումը, հանեն ու հոգեւոր ուսումնարանը ուղարկեն.

Նամակս վերջացնելով, կասեմ, որ եթէ ուսումնարանը այս տարի էլ մնայ պ. Բոզդանովի վերահսկողութեան ներքոյ, չաւ յետ կը մնայ ուրիշ քաղաքների քաղաքային դպրոցներից, որովհետև ասուած է. «Ծոյլ վարժապետն կը համապատասխանէ և ծոյլ աշակերտը»

Մի աշակերտ

ՆԱՄԱԿ ԹՄԲԱԳԻՆ

—

Մոսկվա, յունիսի 24

«Московскія Вѣдомости» օրաթերթը 22 ներկայ յունիսի հրատարակեց Մոսկվայի ի Նպաստ Ցանկասանի Հայ սովտատանջների Նուիրատուութեան ցուցակը:

Ցանկալի է որ հայ ժողովուրդը կարդայ այն և «Մշակի» մէջ, նախ՝ իրրև հաշիւ, երկրորդ՝ իրրև ապահովութիւն այն նուիրատուներին, որոնք այլ և այլ երկիրներից առնտրական գործով պատահելով Մոսկվա՝ մասնակցեցան կարեկցաբար և այժմ պիտի զոհ լինեն կարոտալով իրանց երկիրներում, որ արդէն իրանց կարեկցութիւնը հասել է նպատակին: *) Եւ երրորդ՝ կը բացատրվէր «Մշակի» 101 Ն-ի սխալանքը, որ ընդհանուր հաշուց մէջ Մոսկվայի և Պետերբուրգի նուէրը կարծում է մօտ 6000 ր., մինչդեռ միմիայն Մոսկվայինն է մօտ 10,000 ր.

Այսու հետ ինձ սուրբ պարտք եմ համարում հրապարակաւ յայտնել իմ խորին շնորհակալութիւնը այն ամենայն բարեմիտ նուիրատուներին, որոնք եկեղեցու բեմի և տանտէր իմ հրաւէրը յանուն մարդասիրութեան պատեալով առատաձեռնեցին իրանց յօժարակամ նուէրը, նմանապէս այն Մոսկվայի յանձնաժողովի մեծապատիւ անդամներին և նոցա գործակից պարոններին, որոնք յանձն առին աշխատութիւն ազգի դառնալոյ տառապանքը թեթևացնելու և արտասուքը սրբելու.

Գիտեմ թերևս «Մշակի» պատմանի հակառակ է իմ այս առաջարկութիւնը, որովհետև Մոսկվայի ժողովուրդը ցանկալով փութացնել նպատակին իր օգնութիւնը, սեղանաւորների միջոցով փոքր հեռագրով Մոսկվայից կոստանդնուպոլիս փոխադրելը սոխողական և մարդասիրական համարեց, իսկ այժմ՝ նուիրատուութեան ցուցակի հայ լրագրի հրատարակումը եթէ ոչ սոխողական, գոնէ մարդասիրական է համարում.

Աւագ քահանայ Յ. Սուրէնեանց

ՆԵՐԻՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մենք գրում են ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻՑ, որ այդ քաղաքի հայ երիտասարդութիւնը չը բաւականանալով ալէքսանդրապոլցիներից արած նուիրատուութիւններով յօգուտ վատարեալների սովեալների, դիտաւորութիւն ունի այս օրերս տալ մի հայոց թատրօնական ներկայացումն նոյն նպատակով: Ներկայացումն լինելու է հոգեւոր դպրոցի դահլիճում, խաղալու են «Վարդան Մամիկոնեան» ողբերգութիւնը և մի վոդեվիլ.

—

ԹԻՖԼԻՍՈՒՄ բնակվող դերձակ Գ. Անեան և նրա կինը հասցրին մեզ յօգուտ վանի սովելոց 28 բուբլ, հետևեալ անձերից հաւաքած. Տիկին Լ. Մէլվքան և տիկին Гончарова իւրաքանչիւրը 3 բուբլ, օր. Ն. Ուռնանեանց, օր. Յ. Վարդազարեանց, օր. Տէր-Յարութիւնեանց, տիկ. Արտաշեսի (վրացի), տիկ. Ա. Աւանեանց, տ. Ս. Բաքանսեանց, տ. Լ. Դոզալեանց, տ. Լ. Ազիզեանց, տ. Վ. Միրզոյեանց, տ. Ն. Առաքելեանց, տ. Ս. Լազարեան, տ. Ն. Մատինեան տ. Շ. Խոջամիրեան, տ. Տ. Դաւթեան, պարոն Գ. Տէր-Դաւթեան, Գ. Ա. Սարգսեան, իւրաքանչիւրը 1 բուբլ, օր. Ս. Գուսկով 50 կ., օր. Ե. Խոջամիրեան 30 կ., օր Շ. Անեան 50 կ., տիկին Անանիա Ավետեան 4 բ., պ. Հաճարդ. Անեան 50 կ., ծծիկը Արտաչէս Անեան 20 կ., ընդամենը 28 բուբլ.

—

Սատանայ յօգուտ վատարեալների սովեալների 6 բուբլ ԲԱԳՈՒԻՑ, տիկին Մարիամ Սարգսեանից՝ փողը ուղարկված էր մեզ երկու հարազատական ոսկով, իւրաքանչիւր 3 բուբլ արժողութեամբ.

—

Նորերումս կրկին ազգային նիստեր պատահեցան ԹԻՖԼԻՍԻ քաղաքային Դումայի մէջ. Մինչդեռ ամեն տեղ հացը էժանացել էր, Թիֆլիսում չարունակվում էր թանգ լինել: Ռուսատանից հաց էին բերել և ծախում էին երկաթուղու կայարանի վրա: Այդ բանը քաղաքային վարչութիւնը արգելից ասելով, որ երկաթուղու կայարանի վրա հացի ծախելը մասչելի չէ ամբոխին, այլ միայն չարչիների հարստահարութեան է նպաստում: «Кавказъ» լրագրի մէջ տպվեցաւ մի պաշտօնական հաղորդութիւն նահանգապետից, որի մէջ լրագրութիւններ էին բերված, որոնցից հասկացվում էր թէ քաղաքային վարչութիւնը արուեստական կերպով նպաստում է քաղաքիս մէջ հացի թանգացնելուն: Քաղաքային Դումն վրդովվեցաւ և իր վերջին նստի մէջ, յուլիսի 14-ին, վճռեց բողոքել նահանգապետի դէմ կառավարական Սենատը, թէ նրա պաշտօնական հաղորդութեան և թէ նրա իբրև թէ ինքնագլուխ կարգադրութեան պատճառով քաղաքիս մէջ հացի վաճառման կանոնաւորելու վերաբերութեամբ: Բացի սորանից ընտրվեցան երեք անձինք ձանաւորներից, պ. պ. Նիկոլաեֆ, Ամատունի և Բէհրութով, որոնք խնդրելու են Նորին Բարձրութենից, Կովկասեան փոխարքայից, տեսակցութեան չնորհը, նահանգապետի հետ իրանց ունեցած տարաձայնութիւնները բացատրելու համար.

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲԵԼԳԻԱ

—

«Голосъ» լրագրի մէջ կարդում ենք հետեւեալ առանձնորդաց յօդուածը:

Յուլիսի 7-ին Բրիւսելի մէջ կը սկսվի ազատութեան Համաշխարհային տօնը: Բելգիայի մայրաքաղաքի մէջ յուլիսի 7-ին կը սկսվի երեք ամիս տեւող տօնը այդ փոքր պետութեան անկախութեան 50 տարեայ յոբելեանի

*) Ցաւում ենք, որ չենք կարող հրապարակել այդ մեծ ցուցակը մեր թերթի մէջ.

Խմբ.